

**LIFE** – «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում գրադվածության խթանման միջոցով» ծրագրի

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**  
 #15- Մեպտեմբեր 2015



**USAID**  
 ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



**Save the Children**

LIFE ծրագիրը (2012-2016) իրականացնում է «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

Ծրագրի գործընկերներն են «Ակտիվա» միջազգային հիմնադրամը, «Ունիսոն», «Էյջ-Դի-Փի հիմնադրամ» և «Լիարժեք կյանք» ՀԿ-ները:

Ծրագիրը սերտորեն համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Զբաղվածության պետական գործակալության և գրադվածության կենտրոնների, հաշմանդամություն ունեցող անձանց և ՀԿ-ների, մարզային իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, ծառայություններ մատուցողների, միջին մասնագիտական կրթական հաստատությունների և գործատուների հետ:

**ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ ԿԱՐԴԱՑԵՔ՝**

- *ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՑԱՆՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ*
- *ՆՈՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ*
- *ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԿ ՑԱՆՑԻ (ՀԿՑ) ՄՏԵՂԾՈՒՄ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ*
- *«ԽՈՍՔԻ ԵՎ ՏԵՍԱԽՅԻԿԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ» դասընթաց ՁԼՄ ներկայացուցիչների համար*
- *ՉՀՈՒՍԱՀԱՏՎԵԼ ԵՐԲԵՔ. Ռոման Խմբոյանի պատմությունը*
- *«ՈՉ ԹԵ ԵՄ ԵՄ ՀԱՐՄԱՐՎԵԼ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ, ԱՅԼ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՁ»*
- *ԲԱՐԲԸՐԱ ՖԻՇԼՈՎԻՑ-ԼԵՈՆԳԻ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ*



# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՑԱՆՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ



Ս.թ. սեպտեմբերի 15-ին տեղի ունեցավ Սոցիալական ձեռնարկությունների և գործատուների ցանցի ներկայացումը, որին ներկա գտնվեցին և ողջույնի խոսք ուղղեցին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության Տնտեսական և քաղաքական բաժնի ղեկավար Մեթյու Յուսընը:

Ցանցը, հիմնվելով ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող և «Սեյվ դը չիլդրեն»-ի կողմից իրականացվող LIFE ծրագրի շրջանակներում, Հայաստանի ամբողջ տարածքում

հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց և երիտասարդների զբաղվածության խնդիրը լուծելու համար նպատակ ունի խթանել վերջիններիս միջև տեղեկատվության և փորձի փոխանակումը, ինչպես նաև նրանց կարողությունների զարգացումը և շահերի պաշտպանությունը:

2012 թվականից սկսած՝ LIFE ծրագիրը հիմնել կամ ընդլայնել է 18 «սոցիալական ձեռնարկություններ»՝ այսպիսով աշխատանքով ապահովելով հաշմանդամություն ունեցող 210 անձի: Հենց այդ ձեռնարկությունների նախաձեռնությամբ ստեղծվեց ցանցը, որը կհանդիսանա մի հարթակ, որտեղ հնարավոր կլինի խթանել Հայաստանում սոցիալական ձեռնարկությունների զարգացումը, հանդես գալ հանուն շահավետ հարկային քաղաքականության հաստատման, իրականացնել ֆոնդերի հայթայթման, մարկետինգի վերաբերյալ գործողություններ, և այլն: LIFE ծրագրի շրջանակներում ստեղծված Սոցիալական ձեռնարկությունների և գործատուների ցանցին միացել է նաև Oxygen կազմակերպությունը՝ որը կներկայացնի 22 կոոպերատիվների շահերը:

«Հաշմանդամություն ունեցող անձինք կարողանում են դառնալ հասարակության լիիրավ անդամներ միայն սոցիալական ինտեգրման, դասընթացների և հմտությունների զարգացման հնարավորությունների մատչելիության և իրենց իրավունքները պաշտպանող օրենքների կիրառման դեպքում: Հուսով եմ, որ այս ցանցը հետագայում մեծ առաջընթաց կգրանցի՝ փոխելով հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքը և վարքագիծը: Ես անհամբերությամբ սպասում եմ այն օրվան, երբ երկրի ողջ տարածքում բոլորը կգիտակցեն, որ յուրաքանչյուրի կյանքը կարևոր է»,- ասաց ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության Տնտեսական և քաղաքական բաժնի ղեկավար Մեթյու Յուսընը:

## ՆՈՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

2015 թվականի սեպտեմբերի 25-ին Կոտայքի մարզի Արովյանի քաղաքապետարանի հետ ստորագրվեց Փոխըմբռնման համաձայնագիր՝ սոցիալական ձեռնարկություն ստեղծելու վերաբերյալ: Այն լինելու է պուրակային ծառայություն, որտեղ 15 աշխատողներից 10-ը լինելու են հաշմանդամություն ունեցող անձինք:



Նախաձեռնությունը հիմնված է Վանաձոր քաղաքում գործող «Նեցուկ» սոցիալական ձեռնարկության հաջողված մոդելի վրա, և Արովյան քաղաքում նույնպես նախատեսվում է ձևավորել համայնքային պուրակների, գույքի պահպանման և սանմաքրման աշխատանքներ իրականացնող մի թիմ:

Համատեղ իրականացվող ծրագիրը կշարունակվի ութ ամիս, և Համաձայնագիրը յուրաքանչյուր կողմի համար սահմանում է գործողությունների հստակ ժամանակահատված (սարքավորումների ձեռքբերում, անձնակազմի համալրում և վերապատրաստում և այլն):

Փոխըմբռնման համաձայնագրի ստորագրման պաշտոնական արարողությանը ներկա էին տարբեր շահագրգիռ կողմեր, համայնքի անդամներ, և այն լուսաբանվել է Արովյան քաղաքի տեղական ԶԼՄ-ներով: Հետևյալ [հղումով](#) կարող եք ծանոթանալ նյութին:

## ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԿ ՑԱՆՑԻ (ՀԿՑ) ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

2012 թվականին «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը իրականացրել է «Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՈՒԱ) համար իրականացված ծրագրերի հաջողությունների և մարտահրավերների գնահատում» (LIFE ծրագիր, 2012թ.): Գնահատվել է ՀՈՒԱ հիմնահարցերով զբաղվող 20 ՀԿ-ների իրականացրած 51 ծրագիր: Գնահատման արդյունքում վեր են հանվել կազմակերպչական կարողությունների և, հատկապես, շահերի պաշտպանության ոլորտներում որոշակի բացթողումներ: Բացահայտվել է նաև, որ ՀԿ-ները չունեն համապատասխան կարողություններ՝ իրականացնելու արդյունավետ քարոզարշավներ և գործողություններ՝ հանուն ՀՈՒԱ համար հնարավորությունների ստեղծման, և հաստատելու արդյունավետ և երկարատև համագործակցություն ՏԻՄ-երի և կենտրոնական իշխանության հետ:

Ավելին, դոնոր կազմակերպությունների և պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի միջոցով ռեսուրսների մոբիլիզացման և կառավարության ու մասնավոր սեկտորի հետ

արդյունավետ համագործակցություն հաստատելու ուղղությամբ նրանք հմտությունների զարգացման կարիք ունեն:



Չնայած ՀՀ կառավարության կողմից հաշմանդամությունը առաջնային խնդիր է համարվել, այնուամենայնիվ, հատկապես մայրաքաղաքից կամ մարզային կենտրոններից հեռու գործող շատ կազմակերպություններ տեղեկացված չեն այդ մասին և, հետևաբար, չեն կարող այդ ոլորտում իրականացնել թիրախային ծրագրեր: Ավելին, չնայած երկրում գրանցվել է ՀՈՒԱ նկատմամբ վերաբերմունքի դրական փոփոխություն, ՀՀ կառավարության և ՀՈՒԱ հիմնահարցերով զբաղվող

կազմակերպությունների ռեսուրսները դեռևս բավարար չեն՝ ՀՈՒԱ կարիքները ամբողջովին բավարարելու համար:

Այս պայմաններում շատ կարևոր է դառնում երկրի ամբողջ տարածքում ՀՈՒԱ հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների ջանքերով ստեղծված համապարփակ մոտեցման, հզոր փաստերի վրա հիմնված շահերի պաշտպանության, այդ կազմակերպությունների սերտ համագործակցության և ռեսուրսների մոբիլիզացման անհրաժեշտությունը:

2015 թվականի սեպտեմբեր ամսին հիմնվեց Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող ՀԿ ցանց (ՀԿՑ), որի նպատակն է ուժեղացնել Հայաստանի ՀՈՒԱ հիմնահարցերով զբաղվող ՀԿ-ների կազմակերպչական կարողությունները՝ նպաստելով հաշմանդամության ոլորտում ընդգրկուն բարեփոխումների հաստատմանը, ինչպես նաև խթանելով ՀՈՒԱ հիմնահարցերով զբաղվող տեղական, տարածաշրջանային և ազգային կազմակերպությունների արդյունավետ մասնակցությունը: Ցանցը բաղկացած է ներկայումս LIFE ծրագրի տարբեր բաղադրիչներում ընդգրկված 18-20 կազմակերպություններից:

Ցանցի հիմնումից բացի անդամ կազմակերպությունների համար անցկացվել է վերապատրաստման դասընթաց՝ զարգացնելու նրանց կարողությունները Հայաստանի ողջ տարածքում նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին համազգային քարոզարշավի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության և լայնածավալ հանրային իրազեկման գործունեություն իրականացնելու համար: Երկօրյա վերապատրաստման դասընթացի ընթացքում ՀԿՑ-ի անդամները հնարավորություն ունեցան կատարել Ցանցի SWOT վերլուծություն, խոսել Ցանցի ներքին կառուցվածքի և կառավարման մեխանիզմների, շահերի պաշտպանության, բանակցային գործընթացի և փոխհամաձայնության, ռազմավարության

մշակման, հանրային կապերի և ՁԼՄ-ների հետ աշխատանքի մասին: Դասընթացի ավարտին LIFE ծրագրային թիմը հայտարարեց փոքր դրամաշնորհների հայտամրցույթ՝ ՀՈՒԱ հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների գործունեության համայնքներում շահերի պաշտպանության և հանրային իրազեկման միջոցառումներ իրականացնելու համար: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանվեց հոկտեմբերի 19-ը: Նախատեսվում է տրամադրել 17 փոքր դրամաշնորհ ՀԿՑ-ի անդամներին՝ իրենց գործունեության մարզերում համապատասխան միջոցառումներ իրականացնելու համար:

## ԽՈՍՔԻ ԵՎ ՏԵՍԱԽՍԾԻԿԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

LIFE ծրագրի շրջանակներում սեպտեմբերի 18-ին «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոնում տեղի ունեցավ «Խոսքի և տեսախցիկի գորությունը» ՁԼՄ ներկայացուցիչների համար դասընթաց, որն անցկացրեցին «Ունիտոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Արմեն Ալավերդյանը և հանրային կապերի ղեկավար Մարիաննա Չալիկյանը: Նման դասընթացի անհրաժեշտությունը հասունացել էր ծրագրի իրականացման նախորդ երեք տարիների ընթացքում: Նշված ժամանակահատվածում թեև մեծ կարևորություն էր տրվում ՁԼՄ-ների հետ համագործակցությանը և իրազեկության բարձրացմանը, այդուհանդերձ, լուսաբանման օրինակներում հանդիպում էին տերմինաբանության, վարվելակերպի, ցուցադրվող կադրերի հետ կապված այնպիսի խնդիրներ, որոնք իրականում է՛լ ավելի էին արմատավորում հասարակության շրջանում տիրող կարծրատիպերը: Այդպիսով, չնայած լայնածավալ լուսաբանմանը և թեմային բազմաթիվ անդրադարձներին, վերաբերմունքում փոփոխությունը տեղի էր ունենում բավականին դանդաղ: Այդ իսկ պատճառով նման դասընթացը դարձավ ծրագրի կարևորագույն բաղկացուցիչ մասերից մեկը: Դասընթացի ընթացքում մասնակիցներին, որոնք ներկայացնում էին առցանց և տպագիր մամուլը, ցուցադրվեցին սխալ լուսաբանման իրական օրինակներ, անցկացվեցին ինտերակտիվ վարժություններ, քննարկվեցին հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային ներուժի հանդեպ անվստահություն առաջացնող տերմինները: LIFE ծրագրի շրջանակներում մեդիա-դասընթացներին կմասնակցեն ընդհանուր առմամբ 75 լրագրողներ Երևանից և Հայաստանի բոլոր մարզերից:



## ՉՆՈՒՍԱՀԱՏՎԵԼ ԵՐԲԵՔ. Ռոման Խմբոյանի պատմությունը


2008 թվականի արևոտ օրերից էր, երբ ես, որպես «Ունիսոնի» ներկայացուցիչ, հանդիպեցի հայտնի լրատվամիջոցներից մեկի աշխատակցի հետ: Զրույցը ընդհանուր էր՝ հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ հասարակության վերաբերմունք, ստեղծագործական ներուժի առկայություն... Եվ հանկարծ լրագրողն ասաց.

- Իսկ դուք ճանաչո՞ւմ եք Ռոման Խմբոյանին: Հիանալի երիտասարդ է, աշխատասեր և ձգտող, խելացի և ստեղծագործ:

Ռոմանին մենք դեռ չէինք ճանաչում, սակայն նման բնութագրումից հետո առիթը բաց չթողեցինք և կապ հաստատեցինք նրա հետ: Առաջին շփման արդյունքն «Ունիսոնի» ամսաթերթում լույս տեսած այս պատանու բանաստեղծական նմուշներն էին:

Հետագայում «Ունիսոնը» առանձնակի ուշադրությամբ էր հետևում երիտասարդի գործունեությանը, կյանքում տեղի ունեցող իրադարձություններին: Իսկ նա ժամանակը գուր չէր վատնում՝ ավարտեց ԲՈՒՀ և դարձավ համակարգչի լավ մասնագետ, սովորեց անգլերեն, անցավ բազմապիսի դասընթացներ: Եվ 2015 թ-ին նա արդեն բավականին հարուստ մասնագիտական կենսագրության տեր մարդ էր: Այդպիսով, երբ ՀՀ Կենտրոնական բանկից «Ունիսոնին» առաջարկ արվեց ցանցային ադմինիստրատորի թափուր տեղի լրացման համար, ներկայացվող ցուցակի մեջ առաջին տողերում էր Ռոմանի անունը: Արդյունքում՝ անցած տարիների ընթացքում ձեռք բերած գիտելիքների, ինչպես նաև պետական հիմնարկների համար 2015թ.-ից պարտադիր դարձած աշխատանքային քվոտաների շնորհիվ, այսօր նա արդեն այս հեղինակավոր հիմնարկության թիմի անդամ է.

- Հասկանում եմ, որ նոր ծանոթություններից բացի, այստեղ ինձ ընձեռված է հնարավորություն



վարպետանալ իմ գործում, սովորել էլ ավելին և ձեռք բերել նոր հմտություններ, որ այստեղից կարող է ձգվել իմ ապագայի խոստումնալից և հետաքրքրությամբ լեցուն ճանապարհը: Բայց ամենից շատ, ինչն այստեղ կարևորում եմ, աշխատանքային կոլեկտիվի վերաբերմունքն է, նրանց սիրալիությունն ու բարյացակամությունը միմյանց և քո անձի նկատմամբ,- խոստովանում է Ռոմանը:

Կարծում եմ, Ռոմանի օրինակը կարող է ոգեշնչել հաշմանդամություն ունեցող բազմաթիվ անձանց, և ոչ միայն օրինակը, այլ նաև տված խորհուրդը. «...Առավել կարևոր է՝ ինչ-որ պահին անհաջողություններին բախվելու դեպքում չհուսահատվել երբեք: Այդ ամենը ստիպում է քեզ, որ մի բան փնտրելու, գտնելու, ստեղծելու համար պայքարես: Քանզի սխալներիդ վրա սովորելով կարող ես ապագայում ավելի վարպետանալ»:

Նյութը պատրաստել է  
Մարիաննա Չալիկյանը

## «ՈՉ ԹԵ ԵՍ ԵՍ ՀԱՐՄԱՐՎԵԼ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ, ԱՅԼ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՁ»

Տարիներ շարունակ բարձրահարկի իրենց բնակարանում 31-ամյա Հարություն Մխիթարյանն ինքնակրթությամբ է զբաղվել: Միայն 2005 թ-ին, երբ սկսեց աշխատել բարձրահարկի վերելակը, նա աստիճանաբար սկսեց ելումուտ անել: 2013 թ-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի առաջարկով Հարությունը հրավիրվեց «Կյանքի հմտություններ և աշխատանքի որոնում» դասընթացին և տեղեկացավ «LIFE» ծրագրի ու նպատակների մասին. **«Այդ ժամանակ շատ թերահավատ էի: Մազերիս քանակով դասընթացների եմ մասնակցել, տարբեր խոստումներ լսել, շատ ծրագրեր են «եկել-գնացել», ու մեծ մասը անարդյունք. մենք մնում էինք մեր խնդիրների հետ»:** Հետո Հարությունն իմացավ, որ ԱԻՆ-ը մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնների համար աշխատանքի է հրավիրում հաշմանդամություն ունեցող անձանց: Լրացրեց ինքնակենսագրականը և ուղարկեց նախարարություն:

Մեկ տարի է՝ Հարությունն աշխատում ՀՀ ՏԿ ԱԻՆ Լոռու մարզային Փրկարարական վարչության ճգնաժամանային կառավարման 911 կենտրոնում: Բնավորությամբ շփվող ու կատակասեր Հարությունն ասում է. **«Ոչ թե ես եմ հարմարվել հասարակությանը, այլ հասարակությունն՝ ինձ»:** Աշխատավայրը լիովին հարմարեցված է Հարությունի համար: Նա աշխատում է հերթափոխով, շատ լավ հարաբերություններ է ստեղծել գործընկերների հետ: Ինչպես ինքն է ասում՝ իրեն դրսևորված է զգում:

Աշխատանք գտնելու հարցում ունեցած նախկին թերահավատությունից ոչինչ չի մնացել: Հարությունն այժմ լրիվ ուրիշ մարդ է. **«Հիմա ես պլանավորում եմ օրս, գիտեմ՝ երբ ինչ եմ անելու, երբեմն արդեն ժամանակը չի բավարարում, բայց ավելի լավ է այդպես, քան առաջվա պես»:** Աշխատանքից բացի, 10 տարի է՝ Հարությունը նաև բազկամարտով է զբաղվում, բազմաթիվ առաջնությունների մեդալակիր է, անգամ մարզչական գործով է զբաղվում, բայց մարզական ոլորտն էլ հեշտ չի տրվել: Ժպիտով հիշում է, թե ինչ դժվարությունների միջով է անցել. մարզիչները հրաժարվում էին մարզելուց, մարզասրահներն էլ «մերժում»՝ ոչ մատչելի լինելու պատճառով: Միակ մարզչի՝ Վալերի Ժամհարյանի ընձեռած հնարավորությունը լիովին փոխեց երիտասարդ մարզիկի կյանքը. բազկամարտին զուհագեռ սկսեց զբաղվել նաև ծանրամարտով:

2005 թվականից ի վեր Հարությունը հաջողություններ է գրանցում ծանրամարտի և բազկամարտի հանրապետական մրցաշարերում: Թեև ֆինանսական հնարավորություններ ու պետական աջակցություն չկա արտասահմանյան մրցաշարերի մասնակցելու համար, 2016 թ-ին Բրազիլիայում կայանալիք Պարաօլիմպիկ խաղերին մասնակցելու ցանկությունը, սակայն, չի զիջում. Հարությունն անելու է ամեն ինչ վարկանիշային միավորներ հավաքելու և չեմպիոնական ոսկին նվաճելու համար:

Նյութը պատրաստել է  
Լուսինե Սարգսյանը

## ԲԱՐԲԸՐԱ ՖԻՇԼՈՎԻՑ-ԼԵՈՆԳԻ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Հոնոլուլույում գործող «Աջակցող տեխնոլոգիաների ռեսուրս կենտրոններ» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Բարբերա Ֆիշլովից-Լեոնգը երկշաբաթյա այցով Հայաստանում էր: Նրան հյուրընկալում էր LIFE ծրագրի գործընկեր «Հյուսան Դիգնիթի ընդ Փիս» հիմնադրամը, որի աշխատակից Քրիստինա Հովհաննիսյանը ս.թ. գարնանը փորձի փոխանակման նպատակով այցելել էր վերոնշյալ կազմակերպություն: Տիկին Բարբերա Ֆիշլովից-Լեոնգի այցը Հայաստան ֆինանսավորվել է ԱՄՆ Պետդեպարտամենտի կողմից Ամերիկյան Խորհուրդների «Professional Fellows Program» ծրագրի շրջանակներում: Այցի նպատակն էր նախևառաջ ծանոթանալ Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերին, հաշմանդամության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությանը, տեղական և միջազգային կազմակերպությունների իրականացրած ծրագրերին, ինչպես նաև ներկայացնել սեփական փորձը հաշմանդամության հիմնահարցերի կարգավորման գործընթացում:



Տիկին Ֆիշլովից-Լեոնգը ոլորտում աշխատում է շուրջ 30 տարի և սկսած 1993 թվականից ղեկավարում է «Աջակցող տեխնոլոգիաների ռեսուրս կենտրոններ» ՀԿ-ն, որի հիմնական նպատակն է ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց անկախ և ինքնուրույն կյանքի իրավունքը աջակցող տեխնոլոգիաների միջոցով:

Հայաստանում աշխատանքային ակտիվ 2 շաբաթների ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ Ամերիկյան Խորհուրդների Հայաստանյան գրասենյակի, Սեյվ դը Չիլդրեն LIFE ծրագրի թիմի և ծրագիրն իրականացնող գործընկեր կազմակերպությունների՝ «Ունիսոն» և «Լիարժեք կյանք» ՀԿ-ների և «Հյուսան Դիգնիթի ընդ Փիս» հիմնադրամի ներկայացուցիչների հետ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալի, ՀՀ կրթության և գիտության նախարարության, զբաղվածության տարածքային կենտրոնների, այլ ՀԿ-ների ներկայացուցիչների, ինչպես նաև N14 հատուկ դպրոցի աշխատակազմի և աշակերտների հետ: Կարևոր միջոցառումների շարքում էր նաև ՀՀ-ում ԱՄՆ փոխդեսպան Փրայս Վուդվորթի և մամլո կցորդ՝ Ջոն Գոշերտի հետ հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին աջակցող տեխնոլոգիաների կիրառման կարևորությունը հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույնության ապահովման գործընթացում:

Տիկին Ֆիշլովից-Լեոնգը Հայաստանից մեկնեց հետագա համագործակցության հստակ պատրաստակամությամբ:



LIFE ծրագրի մեկնարկից՝  
2012թ. հունվարից մինչ օրս հաշմանդամություն ունեցող

**543 անձ**

տեղավորվել է աշխատանքի

*Ի գիտություն հետազոտողների, հասարակական և մասնավոր սեկտորի. ՏԵՂԵԿԱԳԻՐԸ հնարավորություն է տալիս լուսաբանել հաշմանդամության ունեցող անձանձ ուղղված ծրագրերը/հետազոտությունները: Հետաքրքրվածության դեպքում կարող եք դիմել LIFE ծրագրին [astghik.mailyan@savethechildren.org](mailto:astghik.mailyan@savethechildren.org) էլ. հասցեով:*

LIFE ՏԵՂԵԿԱԳԻՐԸ պատրաստվում է ԱՄՆ ՄՁԳ Ֆինանսավորմամբ իրականացվող LIFE ծրագրի շրջանակներում: Տեղեկագրում արտահայտված տեսակետները հեղինակներինն են և կարող են չարտացոլել ԱՄՆ ՄՁԳ-ի կամ «Մեյվ դը չիլդրենի» տեսակետները:



**Save the Children**

«Մեյվ դը չիլդրենը» երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ամենամեծ կազմակերպություններից է աշխարհում: Այն ներառում է 29 ազգային կազմակերպություններ, որոնք գործում են ավելի քան 120 երկրներում:

«Մեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչություն

Հայաստան, Երևան 0014, Ազատության պող. 27, 3-րդ հարկ  
Հեռ.՝ (374-10) 20-10-14, 20-10-25, 20-10-29; Ֆաքս՝ (374-10) 20-12-29

Էլ. փոստ՝ [Armenia@savethechildren.org](mailto:Armenia@savethechildren.org)

Վեբ կայք՝ [www.savethechildren.net](http://www.savethechildren.net); [www.life-disability.am](http://www.life-disability.am)



facebook



youtube